ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Digitally signed by GHAZARYAN HOVHANNES 1404750070
Date: 2024.04.03 10:32:24 AMT

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/2249/02/24 ք. Երևան
3 Ապրիլի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ դատարան), նախագահությամբ դատավոր Հովհաննես Ղազարյանի, ծանոթանալով «Ջինջ» ՍՊ ընկերության ընդդեմ «ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության» ՝ Անվավեր ճանաչել (վերացնել) ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության ՝ «Ջինջ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 06.09.2023թ.-ին կայացված որոշումը: պահանջի մասին հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր Հովհաննես Ղազարյանի, ծանոթանալով «Ջինջ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության՝ «Ջինջ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 06.09.2023 թվականի որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին հայցադիմումին և կից փաստաթղթերին, քննարկելով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Էլեկտրոնային համակարգի միջոցով Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում (այսուհետ՝ նաև Դատարան) մուտքագրվել և 28.03.2024 թվականին, ժամը 21:45-ին դատավոր

Հովհաննես Ղազարյանին է մակագրվել «Ջինջ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ նաև Հայցվոր) անունից ներկայացված հայցադիմումն ընդդեմ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ նաև Պատասխանող)՝ «Ջինջ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 06.09.2023 թվականի որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջով:

Դատավորի աշխատակազմին հայցադիմումը և կից փաստաթղթերը հասանելի են դարձել 29.03.2024 թվականին:

Դատարանը փաստում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների և 11.1 գլխի պահանջներին համապատասխան, նույն օրենսգրքի 24-րդ հոդվածի 3.1-րդ մասով և 27.2 գլխով սահմանված կանոնների պահպանմամբ:

Հաշվի առնելով այն, որ հայցադիմումը վերադարձնելու կամ դրա ընդունումը մերժելու հիմքերը բացակայում են, Դատարանը գտնում է, որ հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Նշված իրավանորմի տրամաբանությամբ՝ եթե դատարանն իր նախաձեռնությամբ չի եկել եզրահանգման առ այն, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում, ապա նման եզրահանգման կարող է գալ նաև գործին մասնակցող անձի միջնորդության հիման վրա: Այլ կերպ՝ անկախ միջնորդության առկայությունից կամ բացակայությունից, դատարանը պետք է հանգի հետևության առ այն, որ առկա է գործը դատական նիստում, կամ որ նույնն է՝ բանավոր ընթացակարգով, քննելու անհրաժեշտություն:

Սույն դեպքում, հաշվի առնելով այն, որ հայցադիմումը վարույթ ընդունելու պահի դրությամբ օրենքով սահմանված բացառություններ առկա չեն, Դատարանը գտնում է, որ գործը պետք է քննել գրավոր ընթացակարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետները հաշվարկվում են տարիներով, ամիսներով, շաբաթներով և օրերով: Օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենսդրությամբ նախատեսված ոչ աշխատանքային օրերը:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով, նույն օրենսգրքի 11.1 և 27.2 գլուխների կանոններով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1/. «Ջինջ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցադիմումն ընդդեմ

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության՝ «Ջինջ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 06.09.2023 թվականի որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, ընդունել Դատարանի վարույթ:
2/. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024 թվականի մայիսի 16-ին «DataLex» դատական տեղեկատվական համակարգի միջոցով (պաշտոնական կայքը՝ datalex.am):
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Հովհաննես Ղազարյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am